

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Լիլիթ Լեռնիկի Բաղդասարյան

ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆՈՐԱՄՈՒԾԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՏԵՍԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

**Ը.00.01 - «Ընդհանուր տնտեսագիտություն» մասնագիտությամբ տնտեսագիտության
թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության**

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ - 2015

Ատենախոսության թեման հաստատվել է Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում:

Գիտական ղեկավար՝

տնտեսագիտության թեկնածու, պրոֆեսոր
Իշխան Երեմի Խլղաթյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

Վլադիմիր Լիպարիտի Հարությունյան ՀՀ ԳԱԱ
թղթակից անդամ, տնտեսագիտության դոկտոր,
պրոֆեսոր

Մարինե Կարմենի Աղայան տնտեսագիտության
թեկնածու, դոցենտ

Առաջատար կազմակերպություն՝

Հայաստանի ազգային ազրարային
համալսարան

Պաշտպանությունը կայանալու է 2015 թ. հունիսի 14-ին ժամը 14:00-ին, Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում գործող ՀՀ ԲՈՅ-ի տնտեսագիտության թիվ 014 մասնագիտական խորհրդում:

Հասցեն՝ 0025, ք.Երևան, Նալբանդյան 128:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2015 թ. հունիսի 13-ին:

014 մասնագիտական խորհրդի
գիտական քարտուղար,
տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր



Ս. Ա. Գևորգյան

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Հետազոտության թեմայի արդիականությունը: Համաշխարհային տնտեսության անցումը զարգացման հետարդյունաբերական փուլի, պայմանավորված արտադրության մեջ ավելի կատարյալ և գիտելիքահենք տեխնոլոգիաների ներդրմամբ, նշանակալիորեն ընդլայնեց «տեղեկատվություն», «գիտելիք», «գիտելիքահենք տնտեսություն» հասկացությունների շրջանառումն ու կիրառությունը տնտեսագիտական գրականության մեջ, որտեղ մասնավորապես նշվում է՝ գիտելիքները ստեղծվում են ոչ միայն գիտության և կրթության բնագավառներում, այլև նորամուծական գործընթացների արդյունք են:

Ներկայում տնտեսության նորամուծական զարգացումը երկարաժամկետ կայուն զարգացման և համընդհանուր հիմնախնդիրների լուծման հիմքն է: Իհարկե, բոլոր ժամանակներում էլ նորաստեղծություններն ունեցել են կարևոր նշանակություն, սակայն տնտեսավարման ներկա պայմաններում դրանք ձեռք են բերել նոր հնչեղություն՝ դառնալով տնտեսության զարգացման առանցքային գործոն: Դրանց դերակատարության մեծացմանը զուգընթաց, տեղի է ունենում նաև դրանց մասին պատկերացումների փոփոխություն:

Հետազոտության արդիականության մասին է նաև այն հանգամանքը, որ ժամանակակից տնտեսագիտական գրականության մեջ նորամուծական քաղաքականության հիմնախնդիրները քննարկվում են հատկապես միկրոմակարդակում, իսկ մակրոտնտեսական առումով, կարծես թե, անտեսվել է, սակայն, ինչպես ցույց է տալիս միջազգային փորձը, նորամուծական քաղաքականությունը պահանջում է մակրոտնտեսական լուծումներ: ՀՀ տնտեսության գլխավոր հիմնախնդիրներից մեկը նորամուծական մեխանիզմների ոչ բավարար մակարդակն է, այսինքն՝ համապատասխան միջավայրի թերզարգացածությունը՝ նոր գաղափարների ստեղծման և դրանց արդյունավետ առևտրայնացման առումներով: Նորամուծական գործընթացի ներկայիս փուլը մեր հանրապետությունում նպաստավոր չէ: Ուստի կարևորվում է միջազգային փորձի ուսումնասիրումը, կապված, մասնավորապես, նորամուծությունների ֆինանսավորման մեխանիզմների հետ՝ առանձնահատուկ ուշադրություն սևեռելով մի շարք զարգացած և զարգացող երկրների համանման ցուցանիշների: Այս համատեքստում առանձնահատուկ նշանակություն է ձեռք բերում պետություն-մասնավոր հատված համագործակցության հեռանկարների գնահատումը:

Նորամուծական գործընթացների աճող դերը նոր պահանջներ է ներկայացնում դրանց տեսամեթոդական և գործնական հայեցակարգերի գիտական հիմնավորմանը: Արդյունքը հիմնախնդրի նկատմամբ հայրենական և արտասահմանյան հետազոտողների աճող հետաքրքրությունն է: Այդուհանդերձ ժամանակակից

տնտեսագիտական գրականությունում դեռևս բավարար մակարդակով ուսումնասիրված չեն մի շարք կարևոր հարցեր, որոնք հետագա ընդհանրացման ու կատարելագործման կարիք ունեն։ Այս առումով ևս ակնհայտ է հետազոտության արդիականությունը՝ կապված տնտեսական համակարգում նորամուծությունների դերի և տնտեսական զարգացման վրա դրանց ունեցած ազդեցության հետ։

Հետազոտությունն ընդգրկում է նորամուծական գործընթացի զարգացման ու կարգավորման ինչպես տեսական, այնպես էլ գործնական հարցեր։

Հետազոտության նպատակն ու խնդիրները: Ատենախոսության հիմնական նպատակն է ուսումնասիրել նորամուծական միջավայրի տեսական հիմնախնդիրները, բացահայտել նորամուծական գործընթացին խոչընդոտող գործոնները ՀՀ-ում և մշակել դրա ձևավորման ու զարգացման մեթոդաբանական հիմքերը։ Առաջադրված նպատակին հասնելու համար ատենախոսությունում առաջադրվել են հետևյալ խնդիրները.

- նորամուծական գործունեության արդյունքների հետազոտման հիման վրա գնահատել դրանց արդիականությունը,
- նորամուծությունների վերաբերյալ տեսական ուսումնասիրությունները դիտարկել որպես նորամուծական գործընթացների հետազոտության տեսամեթոդաբանական հիմք,
- բացահայտել նորամուծական գործունեության զարգացման տեսլականը և գործընթացի զարգացմանը խոչընդոտող գործոնները,
- վերլուծել նորամուծությունների ֆինանսավորման ժամանակակից միտումներն աշխարհի զարգացած և զարգացող երկրներում,
- բացահայտել ՀՀ-ում նորամուծությունների ֆինանսավորմանն առնչվող հիմնական խնդիրները և առաջարկել դրանց լուծման ուղիներ՝ հաշվի առնելով ոլորտի կարգավորման միջազգային փորձը,
- հետազոտել նորամուծական ոլորտի և գիտության համակարգի միջև եղած կապն ու փոխազդեցության բնույթը,
- հիմնավորել պետության դերը նորամուծական գործընթացի կարգավորման գործում,
- ձևակերպել հանձնարարականներ պետություն-մասնավոր հատված արդյունավետ փոխհամագործակցության վերաբերյալ։

Ուսումնասիրության օբյեկտը և առարկան: Ատենախոսությունում հետազոտության օբյեկտը նորամուծական միջավայրն է և դրա ձևավորման ու զարգացման վրա ազդող տնտեսական գործընթացները։

Հետազոտության առարկան տնտեսության նորամուծական գործընթացների կատարելագործման ուղիների բացահայտումն է, այդ թվում, արդյունավետ նորամուծական քաղաքականության իրականացման կարևոր պայման հանդիսացող, ֆինանսավորման նոր մեխանիզմների առաջարկումը:

Հետազոտության տեղեկատվական և տեսամեթոդաբանական հիմքերը:

Հետազոտության համար հիմք են հանդիսացել տնտեսական գործընթացների և երևույթների գիտական ճանաչողության ժամանակակից մեթոդները, հայրենական և արտասահմանյան հետազոտողների ուսումնասիրությունները, նորամուծական զարգացման վերաբերյալ տնտեսագիտական ինստիտուտների հետազոտությունները, հայրենական և արտասահմանյան ազգային վիճակագրական ծառայությունների, ՅՈՒՆԵՍԿՕ-ի վիճակագրական բազայի տվյալները, ինչպես նաև ՀՀ Կառավարության պաշտոնական և փորձագիտական գնահատականներն ու ոլորտի վերաբերյալ գիտական հրատարակությունները:

Հետազոտության հիմնական գիտական արդյունքներն ու նորույթը:

Ատենախոսության գիտական նորույթը պայմանավորված է հետազոտության ընթացքում ստացված մի շարք տեսական, մեթոդական և գործնական արդյունքներով: Այսպես՝

- Տարբեր տեսամեթոդաբանական հայացքների համակարգման և քննական վերլուծության հիման վրա տրվել է «նորամուծություն» հասկացության նոր ձևակերպում, այն է՝ նորամուծությունը գիտական հետազոտության արդյունքում բացահայտված, նոր ստեղծված արդյունք է կամ տեխնոլոգիա, որը հանգեցնում է տնտեսական համակարգի որակական փոփոխության, նպաստում շուկայական պահանջարկի ձևավորմանն ու բավարարմանը՝ տնտեսական համակարգում նկատելի դարձնելով դրա ինտեգրալ (հանրագումարային) էֆեկտը:
- Կառավարություն–նորագույն տեխնոլոգիաներ կիրառող կազմակերպությունների համագործակցության արդյունքում առաջարկվել է տնտեսության նորամուծական զարգացմանը նպաստող նոր գործիք՝ լիզինգային վարկի տոկոսադրույքի վճարման նոր մոտեցում, այն է՝ պետությունը մասնակիորեն փոխհատուցի լիզինգային վարկի տոկոսագումարն այն չափով, որ առևտրային բանկը հենց այդ նույն մասով շահութահարկ է վճարում պետական բյուջե:
- Առաջադրվել է նորամուծական միջավայրի բարելավման համաֆինանսավորման նոր մոտեցում՝ <<50/50>> մեթոդ, հիմնված պետություն-մասնավոր հատված արդյունավետ փոխհամագործակցության վրա, որը կապահովի մասնավոր կապիտալի ներգրավում ՀՀ-ի տվյալ ոլորտ և կկենտրոնացնի ռեսուրսները երկրի ռազմավարական նշանակության բնագավառներում:

Ատենախոսության մեջ բացահայտվել են նաև՝

ՀՀ-ում նորամուծական միջավայրի վրա ազդող այն բոլոր գործոնները, որոնք խոչընդոտում են դրա զարգացմանը, որոնցից կարևորվել են՝ ՀՆԱ-ում նորամուծությունների ֆինանսավորման ցածր մասնաբաժինը, գիտական գործունեության տարբեր ուղղությունների գծով ծախսերի ոչ արդյունավետ բաշխումը, ֆինանսավորման աղբյուրների անհամաչափ կառուցվածքը, գիտատեխնիկական աշխատանքներ իրականացնող աշխատողների թվի ու կազմակերպությունների քանակի նվազման միտումը, հայրենական վեցնչության շուկայի թերզարգացվածությունը:

Հետազոտության արդյունքների գործնական նշանակությունը: Հետազոտության ընթացքում ստացված արդյունքներն ու եզրահանգումները կարող են լրացնել և զարգացնել նորամուծությունների վերաբերյալ տնտեսագիտական գաղափարները և կիրառվել նորամուծական գործընթացների հետագա վերլուծությունների ժամանակ: Հետազոտության հիմնական արդյունքները կարող են օգտակար լինել նորամուծական կառավարման արդյունավետ մոդելներ մշակելիս, նորամուծական քաղաքականության վրա ազդող գործոնները կատարելագործելիս և, ընդհանուր առմամբ, նորամուծական զարգացման ռազմավարություններ մշակելիս, իսկ աշխատանքում արժանատի հիմնական դրույթները կարող են կիրառություն գտնել ընդհանուր տնտեսագիտական և քննարկվող ոլորտին վերաբերող հատուկ առարկաների շրջանակներում:

Հետազոտության արդյունքների փորձարկումը և հրապարակումները:

Ատենախոսության հիմնական դրույթներն ու արդյունքները ներկայացվել և քննարկվել են Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի «Ջարգացման ժամանակակից մարտահրավերներ» խորագրով 24-րդ գիտաժողովում, ինչպես նաև Ինֆորմացիոն տեխնոլոգիաների ձեռնարկությունների միության կողմից կազմակերպվող տարեկան միջոցառման ժամանակ «Բիզնես ինովացիոն ֆորում» 2014:

Ատենախոսության հիմնական արդյունքները քննարկվել են Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի «Տնտեսագիտության տեսություն» ամբիոնի նիստում:

Ատենախոսության հիմնական արդյունքներն արտացոլված են հեղինակի 6 գիտական հրապարակումներում:

Հետազոտության կառուցվածքը և ծավալը: Ատենախոսության կառուցվածքը պայմանավորված է դրա նպատակով, խնդիրներով և շարադրանքի տրամաբանությամբ: Բաղկացած է ներածությունից, երեք գլխից, եզրակացություններից, օգտագործված գրականության ցանկից, 28 աղյուսակից, 11 գծապատկերից և հավելվածից: Ատենախոսությունը շարադրված է 131 էջի սահմաններում:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսության **ներածության** բաժնում հիմնավորվել է թեմայի արդիականությունը, ներկայացվել են հետազոտության առարկան և օբյեկտը, հետազոտության նպատակը և խնդիրները:

Ատենախոսության **առաջին` «Նորամուծական գործընթացի տնտեսագիտական վերլուծության տեսամեթոդաբանական հիմքերը»** գլխում հետազոտվել են նորամուծական զարգացման տեսական հիմքերը և նորամուծական գործընթացի ելությունը բնութագրող տեսական մոտեցումները:

Համաշխարհային պատմության մեջ 20-րդ դարաշրջանն աչքի ընկավ տեխնիկական առաջընթացով: Նորարարությունների ստեղծումը և կիրառումը դարձան տնտեսության զարգացման կարևորագույն լծակներից մեկը:

Նորամուծական գործընթացի իրականացման համար անհրաժեշտ է ապահովել նպատակաուղղված ազդեցություն նորարարության ստեղծման ողջ գործընթացի վրա: Անհրաժեշտ է ընդհանուր տնտեսական իրավիճակի փոփոխություն, նոր վերաբերմունք նորամուծական գործունեության նկատմամբ, իրական նորաստեղծական քաղաքականություն և այլն: Այլ խոսքով` հարկ է առաջ քաշել այն շարժիչ ուժերին, որոնք ապահովում են նորամուծական ակտիվություն:

Մի շարք տնտեսագիտական հետազոտություններին անդրադառնալով հեղինակը նշում է, որ նորամուծությունը դիտարկվում է որպես գործընթաց, փոփոխություն, վերջնական արդյունք, մրցակցության համար անհրաժեշտ պայման և այլն:

Համամիտ լինելով առկա սահմանումներին, նկատելով նաև թերություններ, հեղինակը փորձել է տալ նոր սահմանում, որն ավելի ընդգրկում է և առավել ճշգրիտ է բնութագրում տվյալ հասկացությունը: Այսպիսով` նորամուծությունը գիտական հետազոտության արդյունքում բացահայտված, նոր ստեղծված արդյունք է կամ տեխնոլոգիա, որը հանգեցնում է տնտեսական համակարգի որակական փոփոխության, նպաստում շուկայական պահանջարկի ձևավորմանն ու բավարարմանը` տնտեսական համակարգում նկատելի դարձնելով դրա ինտեգրալ (հանրագումարային) էֆեկտը:

Հետևաբար` հիմնավորվում է` համակարգի նորամուծական զարգացումը համալիր գործընթաց է, որը ենթադրում է դրա բաղադրիչների ամբողջական կերպափոխումներ, ինչի արդյունքում հայտնվում ենք «նոր տնտեսությունում»: Յուրովի է մեկնաբանվում նաև «նոր տնտեսություն» հասկացությունը, ըստ որի, դա բիզնեսի կազմակերպման հիմնավոր գործընթացի արդյունք է, որի հիմքում տեղեկատվական և տեխնոլոգիական հեղափոխությունն է, և, որի բարձրագույն մակարդակը` գիտելիքահենք տնտեսությունը:

Նորամուծական զարգացման հնարավորություններն ավելի անաչառորեն գնահատելու համար կատարվել են որոշակի ճշգրտումներ՝ կապված «նորամուծական ներուժ» հասկացության հետ:

Նորամուծական գործընթացի մասին ամփոփ պատկերացում կազմելու համար կարևոր նշանակություն ունի նաև նորաստեղծությունների դասակարգումը: Կատարված ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ տնտեսագիտական գրականության մեջ դասակարգման հարցում գոյություն ունեն տարբեր մոտեցումներ:

Այս իմաստով, հեղինակն առանձնացրել է նորամուծությունների հետևյալ տեսակները.

- **հիմնարար** նորամուծություններ, որոնց կիրառությունը հանգեցնում է արմատական փոփոխությունների,
- **ընտրողական** (սելեկտիվ) կամ ածանցյալ նորամուծություններ, որոնք առաջանում են հիմնարար նորամուծությունների որևէ տարրի փոփոխության արդյունքում:

Նորամուծությունները կարող են վերաբերել նաև և՛ նոր ապրանքի կամ ծառայության ստեղծմանը (ապրանքային), և՛ արտադրության մեջ նոր տեխնոլոգիական մտահղացման օգտագործմանը (տեխնոլոգիական), և՛ ներֆիրմային և անձնակազմի կառավարման նոր միջոցների ու մեթոդների ներդրմանը՝ (կառավարչական), և՛ նոր մարքեթինգային մոտեցումների, ռազմավարությունների կիրառմանը:

Ընդհանրացնելով աշխատանքում նշվում է, որ տնտեսական հարաբերությունների զարգացման ներկա մակարդակում տարբեր երկրների ազգային տնտեսություններում օբյեկտիվ անհրաժեշտություն է դարձել գիտական և արտադրական ոլորտներից առանձնացված տնտեսական գործունեության հատուկ բնագավառի՝ նորամուծական ոլորտի ստեղծումն ու արդյունավետ գործունեությունը:

Ատենախոսության երկրորդ՝ «Նորամուծական գործընթացի իրականացման միջազգային փորձ», գլխում հետազոտվել են նորամուծական գործընթացի իրականացման հիմնական մոտեցումները զարգացած երկրներում, ինչպես նաև դրա առանձնահատկությունները զարգացող երկրներում:

Վերջին տարիներին արևմտյան առաջավոր երկրների համար նորամուծական զարգացումը դարձել է ազգային առաջնահերթ խնդիրներից մեկը: Այս մասին, նախ և առաջ վկայում է նրանց ներդրումների ծավալների արագ աճը՝ նորամուծությունների ոլորտում:

Նորամուծություններում կատարվող ներդրումների մեջ համաշխարհային բացարձակ առաջատար է համարվում ԱՄՆ-ը, որը 2008 թ. այդ նպատակին ուղղեց 398 մլրդ. դոլար, ինչը կազմել է աշխարհում այդ նպատակով կատարվող

ներդրումների՝ 1,1 տրլն. դոլ, ավելի քան մեկ երրորդը: Երկրորդ տեղը, վերջին տարիներին, կայուն ձևով զբաղեցնում է ճապոնիան, երրորդը՝ Գերմանիան: Նորանուծական գործունեության ֆինանսավորման հարաբերական ցուցանիշի առումով 2012 թ. տվյալներով առաջատարների մեջ էին մտնում Իսրայելը (3.93%) և սկանդինավյան երկու երկիր՝ Շվեդիան (3.41%) և Ֆինլանդիան (3.55%): Խոշորագույն զարգացած պետությունների շրջանում ՀՆԱ նկատմամբ գիտությանն ուղղված ծախսերի բարձր հարաբերակցություն եղել է ճապոնիայում (3.39%), ԱՄՆ-ում (2.83%), Գերմանիայում (2.92%)¹:

Աղյուսակ 1

Հետազոտությունների և մշակումների վրա կատարված ներքին ծախսերը զարգացած երկրներում 1996-2012 թթ. (մլրդ. դոլար տարեկան)²

Երկիրը	1996	2000	2005	2010	2011	2012
ԱՄՆ	198	269	328	409	429	453
Ճապոնիա	83	99	129	140	148	-
Գերմանիա	41	52	64	88	97	100
Ֆրանսիա	28	33	39	50	53	54
Հարավային Կորեա	11	14	24	44	50	-
Անգլիա և հյ.Իռլանդիա	22	28	34	38	39	39
Իտալիա	12	15	18	25	26	26
ԵՄ-15	133	176	218	235	250	262
Ընդամենը՝ զարգացած երկրները	528	686	850	854	1092	934

Առավել զարգացած երկրներում առանձնացվող բյուջետային հատկացումների մեջ անվիճելի առաջատարի դերը՝ հետազոտությունների ու մշակումների ոլորտում պատկանում է ԱՄՆ-ին: 2010 թ. նրանք այդ նպատակների համար հատկացրին 133 մլրդ. դոլար, ինչը գրեթե 5 անգամ ավելի շատ էր, քան ճապոնիայում, որն, ըստ այդ ցուցանիշի զբաղեցնում էր երկրորդ տեղը (աղյուսակ 2): Ընդ որում ԱՄՆ-ում, Տնտեսական հետազոտության և զարգացման կազմակերպության (ՏՀԶԿ) անդամ երկրների շարքում նորանուծությունների վրա կատարվող ծախսերի մեջ առավել բարձր են այն ծախսերը, որոնք ուղղված են ռազմական նպատակներին: Եթե Եվրոմիությունում այդ բաժինը, 2000 թթ. երկրորդ կեսին, միջինում կազմում էր 13%, ճապոնիայում՝ 5%, ապա Ամերիկայում այն հասնում էր 58%-ի:

¹ Science, Technology and Innovation, 2013// UNESCO Institute for Statistics.

² Կազմված է մեր կողմից, ըստ UNESCO Institute for Statistics./data.uis.unesco.org/ index.aspx?queryid=74.

Հետազոտություններին ու մշակումներին ուղղված բյուջետային հատկացումները առաջատար զարգացած երկրներում 2000-2012թթ, (մլրդ. դոլար տարեկան)³

Երկիրը	2000	2005	2010	2011	2012
ԱՄՆ	71	101	133	133	140
Ճապոնիա	19	22	24	24	-
Գերմանիա	16	18	27	29	-
Ֆրանսիա	13	15	19	19	-
Անգլիա և հյ.Իռլանդիա	8	11	12	12	11

Ներկայումս, առաջատար զարգացած երկրների մեծ մասում, ձևավորվել են նորամուծությունների ֆինանսավորման արդյունավետ ազգային համակարգեր, որոնք ապահովում են ներդրումային ռեսուրսների բարձր հասանելիությունը՝ նորամուծական գործընթացի բոլոր սուբյեկտների՝ ներառյալ ընկերությունների, հետազոտական կազմակերպությունների, համալսարանների համար: Դրանցում հատուկ դեր ունեն մանր և միջին վենչուրային ընկերությունների ֆինանսավորման ինստիտուտները, որոնք Արևմուտքում հանդես են գալիս, որպես տնտեսության նորարական աճի գլխավոր շարժիչներից մեկը:

2013թ. վենչուրային ֆոնդերի ներդրումները Եվրոպական երկրներում կազմել են մոտ 7.4 մլրդ., իսկ ԱՄՆ-ում 33.1 մլրդ. դոլ⁴, որոնց 11%, 12% համապատասխանաբար բաժին է ընկնում բիզնես հրեշտակներին և ինկուբատոր հիմնադրամներին⁵:

Ձարգացող երկրները երկարատև ժամանակ համաշխարհային նորամուծական գործընթացի հիմնական մասնակիցներ չեն եղել՝ էապես զիջելով արևմտյան զարգացած պետություններին՝ նորամուծությունների ֆինանսավորման և ազգային տնտեսության մեջ դրանց օգտագործման ծավալներով: Սակայն, վերջին տարիներին իրավիճակը արագորեն սկսեց փոխվել: Հաստատուն տնտեսական վերելքը զարգացող պետություններին ստիպեց էապես բարձրացնել հետազոտություններում և մշակումներում կատարվող ներդրումների, գիտատեխնիկական կադրերի պատրաստման ծախսերը:

Դեպի նորամուծական զարգացումը առավել տպավորիչ ցատկ կարողացավ կատարել Չինաստանը: Բավականին կարճ ժամանակահատվածում՝ 1996-2012 թթ ընթացքում, երկիրը կարողացավ բարձրացնել հետազոտություններում ու մշակումներում կատարվող ամենամյա ներդրումները՝ ավելի քան 10 անգամ՝

³ UNESCO Institute for Statistics./data.uis.unesco.org/ index.aspx?queryid=115.:

⁴ [http://www.ey.com/Publication/vwLUAssets/Global_venture_capital_insights_and_trends_2014/\\$FILE/EY_Global_VC_insights_and_trends_report_2014.pdf](http://www.ey.com/Publication/vwLUAssets/Global_venture_capital_insights_and_trends_2014/$FILE/EY_Global_VC_insights_and_trends_report_2014.pdf) p.2

⁵ Նույն տեղում, էջ 10.

հասցնելով մինչև 243.2 մլրդ. դոլարի (աղյուսակ 3): Ըստ տվյալ ցուցանիշի, Չինաստանը դուրս եկավ աշխարհում երկրորդ տեղը՝ զիջելով միայն ԱՄՆ-ին, վստահորեն առաջ անցնելով այն երկրներից, որոնք ավանդաբար առաջատար են հանդիսացել նորարարությունների ոլորտում: Այդպիսի երկրներից են, օրինակ Գերմանիան, Մեծ Բրիտանիան և Ֆրանսիան:

Աղյուսակ 3

Չեռագոտություններում ու մշակումներում կատարվող ներդրումները զարգացող երկրներում, մլրդ. դոլար տարեկան⁶

Երկիրը	1996	2000	2005	2010	2011	2012
Չինաստան	11.6	27.0	71.1	176	205.3	243.2
Չնդկաստան	7.6	12.0	20.4	32.9	36.1	37.8
Բրազիլիա	7.6	12.5	15.3	25.1	27.4	34.1
Մեքսիկա	2.0	3.2	5.3	7.8	8.0	8.1
Թուրքիա	1.6	2.8	4.6	9.8	11.3	-

Ինչ վերաբերում է ԱՊՅ երկրներին, ապա թեև դրանցում գիտական հետազոտություններին և մշակումներին հատկացվող ծախսերի ծավալները որոշակի աճ են արձանագրել (աղյուսակ 4), այնուամենայնիվ ՀՆԱ նկատմամբ այն դեռևս չի ընդլայնվել, նույնիսկ ունեցել է նվազման միտում:

Աղյուսակ 4

Գիտական հետազոտությունների և մշակումների վրա կատարված ծախսերի մեծությունը, %-ով ՀՆԱ նկատմամբ⁷

#	ԱՊՅ երկիրը	Ազգային արժույթով				% -ով, ՀՆԱ նկատմամբ			
		2010 թ.	2011 թ.	2012 թ.	2013թ	2010	2011 թ.	2012թ	2013թ
1	Ադրբեջան /մլն մանաթ/	92.8	106.1	116.7	-	0.2	0.2	0.2	-
2	Բելառուս /մլն բել. ռուբ/	1140.6	2081.9	3537.8	4372.3	0.7	0.7	0.6	0.6
3	Ղազախստան /մլն տենգե/	33.466.8	43.351.6	51.253.1	61.672	0.1	0.1	0.2	0.2
4	Ղրղզստան /հազ սոմ/	320419.1	342521.4	446868.4	-	0.1	0.2	0.2	-
5	Մոլդովա /հազ լեու/	316180.7	333470.9	368238.1	356049.8	0.4	0.4	0.4	0.3
6	Ռուսաստան /մլն ռուբ/	523377.2	610426.7	699869.8	699948.9	1.1	1.0	1.1	1.1
7	Ուկրաինա /մլն գրիվնա/	8995.9	9591.3	10558.5	1178.1	1.1	0.9	1.4	0.8

Առանձնացվել է այն հիմնական գործոնները, որոնք խոչընդոտ են հանդիսանում զարգացող երկրներում նորամուծությունների կայուն զարգացման համար: Դրանցից

⁶ UNESCO Institute for Statistics./data.uis.unesco.org/ index.aspx?queryid=115.

⁷ Կազմված է մեր կողմից ԱՊՀ անդամ երկրների ԱՎԾ տվյալների, www.cisstat.org

ամենակարևորը գիտական հետազոտությունների և մշակումների վրա կատարված ծախսերի անհամաչափ կառուցվածքն է:

Ատենախոսության երրորդ՝ «Նորամուծական ներուժի ձևավորման և զարգացման հնարավոր ուղիները ՀՀ-ում», գլխում հետազոտվել են նորամուծական տնտեսության արդիականացման հիմնախնդիրները մեր հանրապետությունում և տրվել են ՀՀ նորամուծական միջավայրի կատարելագործման ուղիները:

Շուկայական տնտեսությանն անցումը ուղեկցվել է նորարարական ակտիվության աստիճանական նվազմամբ և գիտատեխնիկական ներուժի անկմամբ: Եվ միայն 2000-2012 թթ. հետազոտությունների և մշակումների վրա կատարված ծախսերը ՀՀ-ում կայուն տեմպերով աճի տեմպեր արձանագրեցին, այնուամենայնիվ ՀՆԱ-ի նկատմամբ դրանց մասնաբաժինը դեռևս փոքր է, 2005-ից մինչ օրս՝ ընդամենը՝ 0.2 տոկոս: Այնինչ, արդյունավետության մակարդակը գնահատելիս հաշվի է առնվում ՀՆԱ-ում դրանց տոկոսային արտահայտությունը, քանակական ավելացումն էական չէ: Հետևաբար՝ պետք է մշակել և իրագործել այնպիսի պետական նորամուծական քաղաքականություն, ըստ որի նախևառաջ, հետազոտությունների և մշակումների վրա կատարված ներքին ծախսերի ֆինանսավորման ծավալներում պետական և այլ աղբյուրների ֆինանսավորման բաժնեմասերը բաշխված լինեն հնարավորինս համամասնորեն, ապա աստիճանաբար ՀՆԱ մասնաբաժնում ավելացվեն նորամուծությունների ֆինանսավորման ծավալները:

Հայաստանի Հանրապետությունում նորամուծական ակտիվության ցածր մակարդակի պատճառներից է նաև գիտահետազոտական գործունեության տարբեր ուղղությունների գծով ծախսերի ոչ ռացիոնալ բաշխվածությունը:

Աղյուսակ 5

Գիտական հետազոտություններին և մշակումներին հատկացված ծախսերի բաշխումն ըստ գիտահետազոտական գործունեության ուղղությունների, %-ով, ծախսերի ընդհանուր ծավալի նկատմամբ⁸

Տարեթիվ	Հիմնարար հետազոտություններ	Կիրառական հետազոտություններ	Մշակումներ	Գիտատեխնիկական ծառայություններ
%-ով, գիտական հետազոտությունների և մշակումների ընդհանուր ծավալի նկատմամբ				
2012	13.4	64.8	18.3	3.5
2013	15.9	67.6	13.5	3

⁸ ՀՀ ԱՎԾ տարեգիրք 2014թ., էջ 147-148:

Վիճակագրական վերլուծությունից ակնհայտ է, որ նորամուծությունների ֆինանսավորման մեջ գերիշխում են բյուջետային հատկացումները: Եթե 2012-ին կազմել է 69.4%, ապա 2013-ին ավելացել են՝ կազմելով 71.7 տոկոս: Հակառակ պատկեր է արձանագրվել առկա պատվիրատուների միջոցների հաշվին նորամուծային նախագծերի ֆինանսավորման ծավալների առումով. ցուցանիշն ունեցել է ոչ թե աճման, այլ նվազման միտում: 2013-ին դա նվազել է 3.9 տոկոսային կետով Նորամուծական ակտիվության վրա էական ազդեցություն է թողնում նաև գիտատեխնիկական աշխատանքներում ներգրավված կազմակերպությունների քանակը, որը վերջին տարիներին աստիճանական նվազման միտում է դրսևորում, գիտատեխնիկական աշխատանքներ և մշակումներ կատարող աշխատողների թիվը (վերջին երեք տարիներին նրանց քանակը նվազել է 588-ով) և երկրում աշխատավարձի միջճյուղային դիֆերենցման մակարդակը: ՀՀ-ում նորամուծական զարգացմանը խոչընդոտող գործոնների և դրանց բացասական հետևանքների բացահայտման նկատառումներից ելնելով, կատարվել են մի շարք առաջարկություններ նորամուծական միջավայրի ֆինանսավորման աղբյուրների ներգրավման, առողջ նորամուծական մթնոլորտի ձևավորման և զարգացման համար:

Ատենախոսության «Եզրակացություններ» բաժնում ամփոփված են հետազոտության հիմնական արդյունքները և հակիրճ ձևակերպված են եզրակացությունները, որոնք հիմնականում կայանում են հետևյալում՝

- Շուկայական տնտեսության պայմաններում անհնար է ապահովել երկրի սոցիալ-տնտեսական զարգացում առանց նորամուծական արդյունավետ քաղաքականության մշակման և իրագործման:
- Ուսումնասիրելով նորամուծությունների վերաբերյալ առկա մոտեցումները, հեղինակը փորձել է տալ իր սահմանումը, այն է՝ նորամուծությունը գիտական հետազոտության արդյունքում բացահայտված, նոր ստեղծված արդյունք է կամ տեխնոլոգիա, որը հանգեցնում է տնտեսական համակարգի որակական փոփոխության, նպաստում շուկայական պահանջարկի ձևավորմանն ու բավարարմանը՝ տնտեսական համակարգում նկատելի դարձնելով դրա ինտեգրալ (հանրագումարային) էֆեկտը:
- Ազգային տնտեսության մեջ իրականացվող նորամուծությունների որակական և քանակական բնութագրիչները պայմանավորված են տվյալ հասարակության ներուժով: Վերջինս, որպես նորամուծական գործընթացների ելակետային պայման, ներկայացվում է համապատասխան գործունեության իրականացման համար անհրաժեշտ տարատեսակ ռեսուրսների ամբողջության տեսքով:

- Ձարգացած երկրների նորանուծական քաղաքականության իրականացման փորձի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ այնտեղ կարևորվում է ազգային տնտեսության նորանուծական ոլորտի պետական աջակցության տարբեր մեխանիզմների համալիր օգտագործումը կարգավորման անուղղակի մեթոդների նշանակության աճի պայմաններում:
- ԱՊՀ երկրներում որպես նորանուծությունների զարգացմանը խոչընդոտող գործոններ կարելի է առանձնացնել գիտական հետազոտությունների և մշակումների վրա կատարվող ծախսերում բյուջետային միջոցների գերակայությունը ֆինանսավորման այլ աղբյուրների համեմատությամբ, հետազոտություններին և մշակումներին հատկացվող ծախսերի կառուցվածքում սարքավորումների ձեռքբերմանն ուղղված ծախսերի ցածր տեսակարար կշիռը, գիտական հետազոտություններ և մշակումներ կատարող կազմակերպությունների և այդ ոլորտի աշխատողների թվի աստիճանական նվազման միտումը և տնտեսության այլ ճյուղերի հետ համեմատած՝ գիտության ոլորտում աշխատավարձերի ցածր մակարդակը:
- Հայաստանի Հանրապետությունում նորանուծական ակտիվության ցածր մակարդակի պատճառներից է գիտահետազոտական գործունեության տարբեր ուղղություններով ծախսերի ոչ արդյունավետ բաշխվածությունը, աշխատավարձի միջճյուղային դիֆերենցումը, գիտաշխատողների թվի աստիճանական կրճատումը, ինչպես նաև սակավաթիվ գիտահետազոտական կազմակերպությունների քանակը:

Այս ամենը հաշվի առնելով՝ առաջարկվում է մի շարք հիմնարար միջոցառումներ՝ միտված ինչպես նորանուծությունների ֆինանսավորման հիմնական ուղիների, այնպես էլ պետության կողմից իրականացվող նորանուծական քաղաքականության բարելավմանը:

- Պետության դերակատարությունը մեծանում է, նույնիսկ այն ժամանակ, երբ նորանուծությունը դադարում է հետազոտություն կամ մշակում լինելուց և « նոր կյանք » է մտնում: Հենց այդ ժամանակ դրա անորոշությունն ու ռիսկը բավական մեծ են հատկապես մասնավոր ներդրողների համար, ուստի պետությունը պետք է կատարի վճռորոշ քայլ: Հետագայում, երբ հետազոտություններն ու մշակումներն արդեն ապրանքային տեսքով հայտնվում են վաճառքի շուկաներում, և մեծանում է դրանց նկատմամբ հետաքրքրությունը, ինչու չէ, նաև հանրության վստահությունը, ֆինանսավորման գործընթացում պետք է ավելի մեծ մասնաբաժին հատկացնել մասնավոր հատվածին: Սրա հետ կապված՝ անհրաժեշտ է կիրառել հետևյալ գործիքակազմը.

- ✓ վենչուրային ընկերություններին վարկային երաշխիքների տրամադրում,
- ✓ հարկային արտոնությունների տրամադրում մեկնարկային ընկերություններին,
- ✓ հետազոտություններ և մշակումներ իրականացնող ընկերությունների ծախսերի մի մասի սուբսիդավորում (լրահատկացում),
- ✓ հայրենական ընկերությունների բարձրտեխնոլոգիական արտադրանքի պետական գնումների կազմակերպում:
- ՀՀ նորամուծական միջավայրի արդյունավետության բարձրացման նպատակով կարևորվում է գիտակրթական համակարգի միասնացումը արդյունաբերական կազմակերպություններին: Գործարարության և գիտության միասնացումը կարող է ներառել համագործակցության հետևյալ տեսակները.
 - ✓ շրջանավարտների աշխատանքի տեղավորում,
 - ✓ մասնագիտական հմտությունների որակի բարձրացման խթանում՝ ուսանողներին կրթաթոշակների, իսկ պրոֆեսորադասախոսական անձնակազմին անվանական լրավճարների տրամադրման ճանապարհով,
 - ✓ բարձրագույն ուսումնական հաստատությունների ուսումնական պլանների կազմման գործընթացում շուկայում պահանջարկ վայելող բարձր որակավորմամբ նեղ մասնագետների ընդգրկում,
 - ✓ համատեղ հետազոտությունների և մշակումների իրականացում,
 - ✓ միջազգային կազմակերպությունների աջակցությամբ համալսարանների գիտահետազոտական կենտրոնների ավելացում:
- Նորամուծական քաղաքականության խթանման կարևորագույն գործիքներից մեկը պետք է դառնա նաև նորամուծություններ ֆինանսավորող ինստիտուտների գործունեության արդյունավետության բարձրացումը, որի նպատակով հարկ է կատարել հետևյալ հետևողական քայլերը՝
 - ✓ պետության կողմից համանման ընկերությունների գործունեության նկատմամբ վերահսկողության մակարդակի բարձրացում,
 - ✓ տեխնոլոգիական ցուցահանդեսների կազմակերպում՝ նորամուծությունների առևտրայնացման գործընթացի բարելավման ու հետագա զարգացման նպատակով,
 - ✓ հիմնականում ֆինանսավորման ուղիների ճիշտ ընտրությանը վերաբերող հստակ նորամուծական կողմնորոշիչների սահմանում (այդ կողմնորոշիչները հստակ պետք է համահունչ լինեն պետության նորամուծական քաղաքականությանը):
- Առաջին քայլերն իրականացնելուց հետո, երբ արդեն ձևավորված կլինեն նորամուծական քաղաքականության որոշակի տեսլականներ, անհրաժեշտ է

ստեղծել ազգային նորամուծական գործակալություն, որը կունենա իր տարածքային ստորաբաժանումները բոլոր մարզերում՝ այդպիսով նպաստելով համամասնական զարգացմանը:

- Նորամուծական շուկայի որոշակի զարգացածության պայմաններում կարելի է կիրառել պետություն-մասնավոր հատված համագործակցական կապը, որի դեպքում, ըստ մեզ, ավելի նպատակային է միջոցառումների հետևյալ հաջորդականությունը.
- ✓ պետական և բանկային կապիտալների մասնակցությամբ համատեղ վեներալային ֆոնդերի ստեղծում, խոշոր նորամուծական ծրագրերի համատեղ ֆինանսավորում,
- ✓ պետության և բանկերի կողմից առաջատար հայրենական ընկերությունների ֆինանսավորում՝ արտասահմանում նորագույն տեխնոլոգիաների ձեռքբերման նպատակով,
- ✓ պետության կողմից ուղղակիորեն կամ ինստիտուտների միջոցով ընկերության նախագծային կառավարման մեջ մասնակցություն և դրան երկարաժամկետ ու ցածր տոկոսադրույքով արտոնյալ վարկերի տրամադրում,
- Պետություն-մասնավոր հատված համագործակցության շրջանակներում առաջարկվում է համաֆինանսավորմամբ դրամաշնորհների տրամադրման նոր <<50/50>> մեթոդ՝ հաշվի առնելով մեր երկրի տնտեսական զարգացման առանձնահատկությունները: Նոր ստեղծվող ընկերությունները, որոնք ունեն նորամուծական գաղափարներ, պետք է այս քաղաքականության միջոցով օժանդակություն ստանան պետությունից: Դրա համար կառավարությունը պետք է մշակի համապատասխան քաղաքականություն, իրեն կից ստեղծելով տարբեր բնագավառների մասնագետներից բաղկացած խորհուրդ, որը, նախապես ուսումնասիրելով կազմակերպության ռազմավարական ծրագիրը, կատարելով համապատասխան վերլուծություն և հավանական արդյունքների գնահատում, ինչու չէ նաև առթորսինգ միջազգային մասնագիտացած նմանատիպ կառույցի հետ, իր վրա կվերցնի ռիսկերի մի մասը, կստեղծի համաֆինանսավորմամբ դրամաշնորհների հիմնադրամ, որն էլ կֆինանսավորի նորամուծական գաղափարները հետևյալ կերպ. հաշվի առնելով ՀՀ-ի տնտեսական զարգացման առանձնահատկությունները: Դիցուք՝ մասնավոր ոլորտը ներդնում է 100 հազար դոլար, կառավարությունը նույնպես ավելացնում է 100 հազար դոլար, այսինքն՝ այնքան, որքան մասնավոր ոլորտը: Եթե տվյալ ընկերությունը անհաջողության մատնվի, պետությունը նրանից ոչինչ չպետք է պահանջի, սակայն եթե որոշակի ժամանակահատված հետո տվյալ ընկերությունն ապահովում է անհրաժեշտ

շահութաբերության մակարդակ, ապա պետությունը նորամուծությունների ֆինանսավորման իր մասնաբաժինը տալիս է վենչուրային ֆոնդին, որտեղ փայաբաժին կարող է ունենալ նաև հենց ինքը՝ պետությունը:

- Կառավարություն–նորագույն տեխնոլոգիաներ կիրառող կազմակերպությունների համագործակցության արդյունքում առաջարկվում է կիրառել նաև տնտեսության նորամուծական զարգացմանը նպաստող նոր գործիք՝ լիզինգային վարկի տոկոսադրույքի վճարման նոր մոտեցում: Մասնավորապես՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ պայմանավորված լիզինգային բարձր տոկոսադրույքով, ոչ բոլոր կազմակերպությունները հնարավորություն ունեն ձեռք բերելու նորագույն տեխնոլոգիաներ ձեռնարկատիրական գործունեության արդյունավետության բարձրացման նպատակով, առաջարկվում է, որ պետությունը մասնակիորեն փոխհատուցի լիզինգային վարկի տոկոսագումարն այն չափով, որ առևտրային բանկը հենց այդ նույն մասով շահութահարկ է վճարում պետական բյուջե: Պետական միջամտությունը այս գործընթացին կօգնի ամրապնդել ձեռնարկությունների հաջողությունները և տնտեսական դիրքը օրեցօր սրացող մրցակցության պայմաններում:
- ՀՀ-ում պետություն-մասնավոր հատված համագործակցությանը խոչընդոտում է հիմնականում երկու գործոն: Նախ՝ բիզնեսը չի ցանկանում մասնակցել համանման նախագծերի ոչ միայն բարձր ռիսկայնության և տեղեկատվության անորոշության, այլև բացակայում է հստակությունը մտավոր գործունեության արդյունքների նկատմամբ սեփականության իրավունքի հստակ մեխանիզմները:
- Միջազգային նորամուծական կոոպերացիայի զարգացմանը խոչընդոտող գործոն է պատենտների՝ հաճախ միայն ՀՀ տարածքում գործելը, քանի որ նորարար արդյունքները դեռևս բավարար չափով կողմնորոշված չեն դեպի համաշխարհային շուկա, կամ հայրենական ընկերությունները հայտեր չեն ներկայացնում միջազգային արտոնագրային կազմակերպություններ: Այս առումով, հարկ է կիրառել հետևյալ հաջորդական միջոցառումները՝
 - ✓ հիմնել լաբորատորիաներ և գիտական կենտրոններ, որոնք սերտորեն կհամագործակցեն միջազգային նմանատիպ կառույցների հետ, ինչը կնպաստի հայրենական նորամուծական արդյունքների արտահանմանը,
 - ✓ համագործակցելով սփյուռքի հետ, կարելի է հեշտացնել հայրենական ընկերությունների ելքը դեպի միջազգային շուկաներ, նպաստելով ոչ միայն արդյունքների առևտրայնացման, այլև ներդրումների ներգրավման գործընթացին:

Ընդհանուր առմամբ, Հայաստանի Հանրապետությունում մասնավոր կապիտալի ներգրավումը նորամուծությունների ոլորտ և հետազոտությունների ու մշակումների ֆինանսավորման ճկուն մեխանիզմների ձևավորումը հնարավոր է ապահովել միայն պետության և ֆինանսաբանկային համակարգի արդյունավետ փոխհամագործակցության պայմաններում:

Ատենախոսության հիմնական արդյունքները արտացոլված են հեղինակի հետևյալ հրապարակումներում

1. Բաղդասարյան Լ.Լ., Պետության ինովացիոն քաղաքականության խնդիրները ՀՀ-ում, Տեղեկատվական տեխնոլոգիաներ և կառավարում, N 4, Երևան, 2006, էջ 153-156:
2. Բաղդասարյան Լ.Լ., Ինովացիոն գործունեության օբյեկտիվ նախադրյալները, Տեղեկատվական տեխնոլոգիաներ և կառավարում, N 4, Երևան, 2006, էջ 157-160:
3. Բաղդասարյան Լ.Լ., Ինովացիոն (նորամուծական) գործընթացի առանձնահատկությունները զարգացող երկրներում, Ֆինանսներ և էկոնոմիկա, N 6 (168), հունիս, Երևան, 2014, էջ 73-75:
4. Բաղդասարյան Լ.Լ., Ջարգացող և զարգացած երկրների ԱԻՀ-երի հիմնական բնութագրերը, Ֆինանսներ և էկոնոմիկա, N 6 (168), հունիս, Երևան, 2014, էջ 76-77:
5. Բաղդասարյան Լ.Լ., Նորամուծական տնտեսության կայացման խոչընդոտները ՀՀ-ում, Ջարգացման ժամանակակից մարտահրավերներ, ՀՊՏՀ 24-րդ գիտաժողովի նյութեր, Երևան, 2015, էջ 61-65:
6. Բաղդասարյան Լ.Լ., ՀՀ նորամուծական տնտեսության կատարելագործման ուղիները, Ֆինանսներ և էկոնոմիկա, N 1-2 (173-174), Երևան, 2015, էջ 81-82:

Багдасарян Лилит Лерниковна

ТЕОРЕТИЧЕСКИЕ ПРОБЛЕМЫ ИННОВАЦИОННОГО РАЗВИТИЯ ЭКОНОМИКИ

Автореферат диссертации на соискание ученой степени кандидата экономических наук по специальности 08.00.01 - „Общая экономика”.

Защита диссертации состоится 14-ого июля 2015г. в 14:00 часов на заседании специализированного совета 014 ВАК РА по экономике, действующего в Армянском государственном экономическом университете по адресу: 0025, г. Ереван, ул. Налбандяна 128.

РЕЗЮМЕ

Начиная с половины XX века наибольший интерес в ряду вызовов в сфере развития мировой экономики приобрели проблемы, связанные с инновационными процессами в экономике. Это объясняется тем, что научно-техническое развитие создает все больше и больше возможностей для быстрого развития экономик отдельных стран на основе происходящих в мировых масштабах изменений в экономической и социальной сферах. Инновации делают экономическую жизнь более динамичной, возникают требующие решения новые проблемы, для большей части которых нужны исследования макроэкономического характера. Этим и обусловлена актуальность диссертационного исследования.

Целью исследования является изучение проблем инновационной среды, выявление факторов, препятствующих инновационным процессам в РА, и разработка методологических основ ее формирования и развития. Для достижения поставленной цели выдвинуты следующие **задачи исследования**:

- оценить актуальность инновационной деятельности на основе исследования ее результатов, рассмотреть теоретические исследования в сфере инноваций в качестве теоретико-методологической основы изучения инновационных процессов,
- выявить перспективы развития инновационной деятельности и факторы, препятствующие развитию инновационных процессов,
- проанализировать современные тенденции финансирования инноваций в развитых и развивающихся странах мира, выявить основные проблемы, касающиеся финансирования инноваций в РА, и предложить пути их решения, принимая во внимание международный опыт регулирования данной сферы,
- исследовать связь и характер взаимовлияния сферы инноваций и научной системы,
- обосновать роль государства в деле регулирования инновационных процессов,

- сформулировать рекомендации касательно эффективного сотрудничества государство-частный сектор.

Объектом исследования является инновационная среда и экономические процессы, влияющие на ее формирование и развитие.

Предметом исследования является определение путей совершенствования инновационных процессов экономики, в том числе предложение новых механизмов финансирования, являющихся важным условием осуществления эффективной инновационной политики.

В первой главе автором рассмотрена литература и авторитетные исследования по теме, рассмотрены и проанализированы понятия “инновация”, “новая экономика”, “инновационный процесс”, а также сформулировано новое определение понятия “инновация”. Во второй главе диссертационного исследования рассмотрен опыт развивающихся и развитых стран и их возможное применение в нашей стране. В третьей главе выявляются факторы, препятствующие развитию инноваций в РА и их негативные последствия, а также предлагаются способы привлечения источников финансирования инновационной среды, формирования и развития здоровой инновационной среды.

Научная новизна исследования заключается в следующем:

- На основе систематизации различных теоретико-методологических точек зрения и анализа, дана новая формулировка понятия “инновация” - ею является новосозданный результат или технология, выявленные в результате научного исследования, которые приводят к качественным изменениям экономической системы, способствуют формированию и удовлетворению рыночного спроса, делая ощутимым его интегральный (суммарный) эффект в экономической системе.
- В результате сотрудничества правительство - организации, применяющие новейшие технологии, предложен новый инструмент, способствующий инновационному развитию экономики - новый подход оплаты процентной ставки лизингового кредита, который заключается в том, чтобы государство частично возместило проценты по лизинговому кредиту в том размере, в котором коммерческий банк платит в государственный бюджет налог на прибыль.
- Предложен новый метод улучшения инновационной среды взаимного финансирования <<50/50>>, который основан на эффективном взаимном сотрудничестве государство-частный сектор, которое обеспечит привлечение частного капитала в данную сферу РА и сконцентрирует ресурсы страны в сферах стратегического значения.

Baghdasaryan Lilit Lernik

Theoretical Problems of Innovation Development of Economy

The abstract of the thesis for receiving the degree of Doctor of Economics in the specialty 08.00.01 – “General Economics”.

The defense of the thesis will take place on July 14, 2015, at 14:00 o'clock at 014 Council on Economics of SCC RA at Armenian State University of Economics, address: 128 Nalbandyan Street, 0025, Yerevan, Armenia.

RESUME

Since the half of the XX century, problems connected with the innovation processes in the economy gained the greatest interest among the challenges in the sphere of the development of the world economy. It is explained by the fact that the scientific-technical development creates more and more opportunities for the rapid development of the economies of separate countries on the basis of the changes taking place in the economic and social spheres in world scales.

Innovations make the economic life more dynamic, there appear new problems that need solutions, most of which require macroeconomic researches. The topicality of the research is conditioned just by this.

The aim of the research is the study of the problems of the innovation environment, the exposure of factors preventing from the innovation processes in the Republic of Armenia and the elaboration of methodological foundations of its formation and development. The following tasks have been advanced in the thesis for reaching the put aim.

- To evaluate the topicality of the innovative activities on the basis of the results of the research,
- To consider theoretical researches in the sphere of innovations as a theoretical-methodic basis of the study of innovative processes
- To expose the visions of the development of innovative activities and the factors preventing from the development of the innovation processes.
- to analyze the modern tendencies of financing of innovations in the developed and developing countries of the world.
- to expose the main issues related to the financing of innovations in the Republic of Armenia and suggest ways on their solution, taking into account the international experience of the regulation of the sphere
- to study relation and the nature of mutual interaction of the innovation sphere and the scientific system

- to substantiate the role of state in the matter of the regulation of the innovation processes
- To formulate recommendations related to the effective cooperation between the state and private sector

The object of the research is the innovation environment and the economic processes influencing its formation and development.

The subject of the research is the determination of the ways of improvement of the innovation processes, including the suggestion of new mechanisms of financing being an important condition of the performance of the effective innovation politics.

In the first chapter of the work, the author studied the literature and prestigious researches on the topic, touched upon and analyzed such notions as “innovation”, “new economy”, “innovation process”, as well as a new definition of the notion “innovation”, which differs from the available definitions with its integral effect, has been formulated.

In the second chapter of the work the experience of the developed and developing countries has been studied, i.e. the policies conducted by them, influences of the important tools for the innovative development on the economies of each country, and their possible application in out country.

The third chapter is dedicated to the factors preventing from the innovative development in the Republic of Armenia and the exposure of their negative consequences, as well as a number of basic ways have been suggested for the attraction of the sources of financing of the innovation environment, the formation and development of a healthy innovative atmosphere in the country.

The following results can be considered as novelty:

- New formulation of the notion “innovation” has been given, based on the systemization and critical analysis of different theoretical- methodological views, that is innovation is the result of scientific research, it is a new result or technology, that leads the changes in quality of economic system, promotes the formation and satisfaction of the market demand, making evitable its integral effect in economic system.
- As a result of cooperation of organizations applying government-new technologies were suggested as a promotion of innovative development of economy, that is a new approach of the payment of the interest rate of leasing, that is the government pays the leasing credit just the trade bank pays the profit for a state budget.
- A new “50/50” methodological approach of the improvement of innovation environment has been advanced, based on the effective cooperation between the state and the private sector, which will provide the attraction of private capital in the given sphere of the Republic of Armenia and will centralize the resources in the spheres of strategic importance of the country



